30. ԿՆԿԱՆ ՍԸՌ Չ'ՍԵՍ

Ժամանակին մեկ մարթըմ աղքատ կ'ըլլի։ Կնիկը շատ ագարսրզ[1] կըլլի։

Կնիկը ըսավ.— Թե օր դու ինձի էս հարուստներու պես կը պայես գու, քեզի ես կնկություն կէնեմ, չէ սե՝ քեզի ոոզադմիջ կանեմ[2]։

Էրիկը գնաց մայլի մեջ պառավըմ կար, իրեն սրոը հայտնեց։

Էս կնիկը ըսավ մարթուն.— Գնա էն կնկանեդ քառասուն օր օր առ։

Էն էլ գնաց կնկանեն քառասուն օր օր առավ։

Մարթն էկավ էգ կնկան ըսավ.— Ես իմ կնկանեն քառասուն օր օր առա։

Կնիկը ըսավ մարթուն.— Դու ամեն առավոտ հաց մի աջի ծովը ցիք։

Մարթը ամեն էքվան մեկ հաց ծովը կու ցքեր։ Եռեսուն ինը օր հաց ցքեց, քառասուն օրը թմմած, ձուկըմ ծովու միջեն ելավ, մարթուն կլլեց, առավ ծովու մեջը կու տաներ, ջուրը մարթուն բան չէր էնե։

Ձուկը մարթուն ըսավ.— Ինսան օղլի, ես քեզի հ'ո՞ւր կու տանիմ։

Ըսավ.— Ես չիտեմ հ'ուր կը տանիս։

---

[1] Անբարոյական (Ս. Բ.)։

[2] Կթողնեմ (Ս. Բ.)։

Զուկը ըսավ.— Եբ օր դու ամեն էքվան էն մեկ հացը ծովը կու ցբեիր, մենք էն հացը կ'առնեինք մեր թագավորին կու տանեինք. մեր թագավորն ըսավ. «էս մարթուն բերեք, էնոր մուրազը տամ». ես էլ էկա քեզի կու տանեմ գու. ի՞նչ մուրազ պիտի ուզես դու մեր թագավորեն։

Ըսավ— Ես չիտեմ՝ ինչ պիտի ուզեմ։

Զուկը կըսե.— Ես քեզի ինչ տեսակ օր կու խրատեմ, դու էն տեսակ էրե։ Ինսան օղլի՛, եբ օր մեր թագավոր կըսե. «Ուզե, մուրադդ տամ», ըսե. «Իմ մուրադս քու սաղութենն է», թագավորը կըսե. «Իմ սաղութենես քեզի օգուտ չկա», դու ըսե. «Եբ օր քու սաղութեններդ ինձի օգուտ չկա, անդամըմ իմ բերանս թքե»։

Զուկը, սովրեցուց ինսան օղլուն պրծավ, մարթուն առավ ու թագավորի քովը տարավ։

Թագավորն ըսավ.— Ինսան օղլի, դու ի՞նչ գիտեիր օր ես ինսանի հացին քաղցած էի, դու ինձի ամեն էքվան հացիմ պաշար տվիր, ուզե քու մուրադդ տամ։

— Իմ մուրադս քու սաղությունդ է,— ըսավ։

Թագավորը ըսավ.— Սաղութեններս քեզի խեր չկա, ուզե մուրադրդ տամ։

Ինչպես օր իրեն տանող ձուկը իրեն խրատել էր, էն էլ էնոր խրատով ըսավ օր.— դու մինակ իմ բերանս թքե։

Թագավորն ըսավ.— Քու ուզած մուրադրդ կուտամ, միննակ թե ինսան օղլու չհայտնես սրդդ. ինչ օր օր հայտնեցիր, մահդ էն օր կու հասնի դու։ Բաց բերանդ,— ըսավ։

Մարթը բերանը բացեց, ձուկ թագավորը բերանը թքեց։ Իրեն տանող ձկին հրաման էրավ թե.— Տա՛ր, չորը հանե։

Զուկը առավ, բերեց. չորը հանեց։ Մարթն չորը նստավ, շիվաբավ կայնավ։ Կու մտածեր. «Ես ինչպես եմ եղել, հ՞ո՞ւր եմ գնացել»։ Խելքը գլխուն էկավ, մեկ քարիմ լերթ[1] տվեց նստավ։ Տեսավ օր ճիճունները կը խոսին ամենը ուր լեզվով, ինքն էլ կը հասկնար ճիճուներու լեզուն։ Ինքը ծովի քյանարին մոտիկ էր. ծովը՝ ամեն ճիճու, օձ, ջանավար, գորտ. կու խոսեին գու, ինքը կու հասկանար։ Ինք իրեն գործին կու մտածեր գու. «էս ինչ բան է, օր ամենը կու խոսեն՝ ես կու հասկնամ գու»։

Էն սահաթին մեկ ճնճուղըմ եկավ իրեն առջևեն անցավ, ըսավ.— Ինսան օղլին երանի թե խելք ունենար. քարի տակը գյուղումըմ օսկի կա, քարը սրչե, օսկին հանե, տանե բոլ, բոլ ուտե։

[1] Կռնակ (Ս. Բ.)։

Մարթը ինքն իրեն ըսավ թե.— Թե օր ճնճուղի ըսածը ղորթ է, քարը սրչեմ այեմ, թե օր օսկի կա, ձկան ինձի տված մուրադը էդի է։

Քարը սրչեց, ձեռքովը ճանգռթեց, փորեց, քիչ փորեց, գյուղումըմ դուրս էկավ, օսկին առավ, ինքն իրեն ըսավ. «Ղորթ է, ձկի տված մուրադը էս է»։

Առավ էկավ տունը, կնիկը շատ բարկացավ, թե.— Մենք քեզի հետ օր էինք կտրել։

Կնկան ըսավ.— Դու ինձնեն ի՞նչ դուզես։

Կնիկը ըսավ.— Ես քեզի ըսել էի, թե դու ինձի լավ ապրեցուր, հարուստներու պես, թե չէ սէ քեզի թոզ կուտամ, կնիկ չեմ ըլի։

Էրիկը ոուռըմ օսկի հանեց. «Ահասիկ, ա՛ռ, քեզիկ թումբան առ», բուռըմ էլ հանեց, «Ահասիկ, ա՛ռ քեզիկ շապիկ առ, էս գյուղում օսկին էլ չում քու մայվան օրը, ինչ գուզես առ ու կեր»։

Ուրախությամբ հացերը կերան ու պառկան։ Կնիկն ըսավ.— Մա՛րթ, օսկին քեզի ո՞րդից է։

Մարթը ձկի խրատ միտքը բերելով չ՝ըսավ։

Մարթը ըսավ.— Դու ինձե ինչո՞ւ կը հարցնես, թե օսկին որդից է, դու գուզեիր լավ ապրիլ, էդ օսկիով կե, խմե, հաքի։

Կնիկը ըսավ մարթուն.— Ես քու կնիկդ ըլիմ, քու սրոը կարելի չէ օր չ՝գիտնամ, պետք է գիտնամ։

Մարթը ըսավ.— Ես չեմ կրնա ըսել, թե օր ըսեմ, ինձ համար վնասավոր է։

Կնիկը գիշերը շատ նեղեցուց, թե՝ ըսա՛։

Մարթը ըսավ.— Էս գիշեր համբերե, գալող գիշերը ըսեմ քեզի։

Եդի գիշերը պառկան, կնիկը ըսավ թե.— Դե ըսե։

Մարթու նպատակն էր, կնկանեն նեղընալով ըսեր պիտի։

Իրենց ֆուխարության ժամանակը մեկ բոզ եզմ ունեին, մեմել մեծ շունմ ունեին, մեմել մե խորոզմ ունեին։

Կնիկն օր ուր իրկան կը նեղեցներ, կըսեր. «Դե ըսե», մարդու հոգուն հասավ, պիտի ըսեր, արթխ շունը մարթու միտքը հասկցավ։ Շունը ըսավ խորոզին դռնեն պառկած տեղը.— Խորոզ ախպեր.

Ըսավ.— Ի՞նչ է շուն ախպեր։

— Գիտես,— ըսավ,— էսօր մեր տան տերը իրեն սրոը պիտի ըսե ու մեռնի։ Բոզ եզը պիտի մորթեն փետրտի հացը (ժամկոչներուն, գերեզմանը փորողներուն տրված հացը)[1] պիտի կերցնեն, օսկորները չոփլուզ կը թափեն, կէրթամ բոլ, բոլ կը կրծեմ։

Խորոզը ըսավ,— Պապանձի քու բերանը, ի՞նչրխ լայեզ կու

[1] Մանոթ. բանահավաքը։

տեսնիս, մեր տան տիրոջ մեռնիլը,— ըսավ,— մեր տերը Թող չ՚ըսե ալըռը։

Շունը ըսավ.— Չես իմացե, անգդամ կնեա էռեսեն մարթը գնացել ծովն է ընգել։

Խորողը կ՚ըսե.— Շուն ախպեր, ես քեզի խրատ մի տամ։ Թող մեր տան տերը էման էնե, ես մեկ խորոզ մեմ, քառսուն հավ ունիմ չոփլուգի ծերը, իմ խոսքես չեն դուրս էլլի։

Շունը կ՚ըսե.— էն ենչպե՞ս էնե։

— Շուն ախպեր, էս գիշեր Թող չ՚ըսե։ Կնկան էրթում էնե, թե «Վաղը գիշեր ես քեզի կ՚ըսեմ», էքվնեն էլլե, ալալըգի խուլթուղ փալութ[1] կա, էնդից դաստե մի բիր[2] կտրե, ոստերը Թարսինա զարգե, բերե նեսքևը պայե, վաղը գիշերը կնիկ օր կըսե. «Ըսե», կնկան ըսե Թող. «Կեցի ես տեղես էլլիմ, հալավս հաքնիմ կայնիմ, քեզի իմ սըռըս պատմիմ», Թող էլլե, դաստով բիրը նեսքևեն առնե, գա կնկ·ա յաթաղի վրա կայնի, կնիկն օր կըսե. «Պատմե», բիրը Թող հանե բաշլայե զարդելը, մինչև օր բրերը կոտրի, կնիկը Թորա կենե, դհա չի ըսե Թե. «էս օսկին որդեղից է քեզի»։

Խորոզի ու շանը խորաթեն մարթը իր տեղի մեջ լսեց, հասկացավ ու կնկանը չ՚ըսավ սըռը։ Խափեց ըսեց.— Վաղը գիշեր քեզի կ՚ըսեմ։

էլավ վաղը գնաց բըրեր կտրեց, բերեց նեսքևը պահեց։ Օր քնելու վախտը էկավ, օր պառկան, կնիկը ըսավ.— Դե սըռըդ պատմե, ըսե այիմ որդիից է օսկին։

Մարթը ելավ վեր, հալավը հաքավ, նեսքևեն բրերը բերեց։ Կնիկը ըսավ Թե. «Ըսե», բաշլայեց էրիկը բըրով զարգել տեղաց մեջ, հինգ բիր օր կոտրավ վըրեն, կնիկը ըսավ.— Ես քեզի Թոբա, դհա չեմ ըսե, Թե օսկին որդի՞ց է։

Եդվան մարթը ազատվավ, կերավ խմեց իրեն մուրադին հասավ։ Դուք էլ հասնիք ձեր մուրադին։

Խրատ ըլլի օր կնկան սըռըդ չըսես։ Կնիկը քըզի կու տանի, դժողքը կու ցքե։

Երկնուց իրեք խնձոր իջավ, մեկ ըսողին, մեկ գրողին, մեկը լսողին։

---

[1] Անտառ (Ս. Բ.)։

[2] Վարոց (Ս. Բ.)։